աղմկող եթէ եկեղեցական յանձնեն Եպիսկոպոսին գաւառին յայնմիկ զի դատեսցի, եթէ աշխարհական յիշխան քաղաքին զի վճռեսցի այսպիսի մեղաւորիս զի մոցէ 'ի բանտ քսան և մի աւուր ծախիւք իւրօք և ապա ելցէ, և եթէ այրս այսպիսի մեղուցեալս լրբաբար կրկին մեղիցէ՝ մոցէ բանտ և հատուցանեսցէ տասն դահեկան տան աղքատաց, եթէ դեռ ևս մի զսպեսցի վարք իւր մոցէ 'ի բանտ և դան հարեսցեն հաշակաւոր տեղի քսան և չորս զամչի։

ԳԼՈՒԽ ՅԿԱ.

Աստիճան կանաց 'ի տան Տեառն 'ի վերայ իւրաքանչիւր աստիճանի այսինքն.

Տիրուհի . . . . 1 առաջի աստիճանի։
Իշխանուհիք . . . 2
Տիկինք զօրագլխաց 3
Զինուորաց, վաճառականաց, հողագործաց, արհեստաւորաց . . . 4

ԳԼՈՒԽ ՅԿԲ.

Ով ոք բարկացեալ ըստ անձամբ վրէժ հայցէ 'ի բարկացանողէ իւրմէ, եթէ բարկացանողն մեղմաբար հրաւիրեսցի նմայ դատաստան բար-